ԼՈՒԻԶԱ ԳՈՒՄԲՈՅԱՆ
«Ռուսաց լեզվի և մշակույթի» կենտրոնների ղեկավար

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ ՀԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԵՎ ԴՐԱ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐՈՒՄ

Գենդերային անհավասարության խնդիրը լայն արձագանք է ստացել հայ իրականության մեջ: «Կանանց հարցը» հրապարակ հանվեց հայ տղամարդ մտավորականների կողմից՝ որպես ազգային շարժման, ազգային ընդհանուր նպատակների թելադրանք:

Հանգուցային բառեր. Գենդերային անհավասարություն, կինը և քաղաքականությունը, ժողովրդավարության մակարդակ,

Հայ հասարակական հոսանքների գրեթե բոլոր գործիչներն ընդունում էին իգական սեռի կրթության անհրաժեշտությունը՝ ելնելով ազգային շահերից: Նրանք գտնում էին, որ առանց դրա իրականացման, այլևս հնարավոր չէ ապահովել ազգի առաջընթացն ու զարգացումը: Իգական սեռի կրթության անհրաժեշտությունը հիմնավորվում էր սերնդի դաստիարակման գործում կնոջ ունեցած դերի կարևորությամբ:

Հայ անվանի մտավորականներից ու գրողներից իգական սեռի կրթության անհրաժեշտությանը կողմնակից էին Մ. Նալբանդյանը, Ստ. Նազարյանցը, Ռ. Պատկանյանը, Պ. Պռոշյանը, Բաֆֆին և այլք: Առաջինն այդ մասին բարձրաձայնել է «Ազգասեր» և «Ազգասեր Արարատյան» թերթերի խմբագիր՝ Մեսրոպ Թաղիադյանը: Իր «Ճառ դաստիարակության օրիորդաց» աշխատության մեջ նա բացահայտել է կանանց կրթության անհրաժեշտության հիմնավորումները: Նրա համոզմամբ՝ հայրենիքի անկախության համար մարտնչող քաղաքացիներ դաստիարակելու համար առաջին հերթին անհրաժեշտ են ուսյալ մայրեր[1]:

Իսկ Հ. Աբելյանը պնդում էր, որ կրթության միջոցով կինը կազատվի անբարոյականությունից, որին նրան դրդում էր կարիքը: Հ. Հիսարյանը գրում էր. «Մայրերն են միայն, որ մարդիկ կշինեն»:

Ազգային-պահպանողական հոսանքի ներկայացուցիչները վախենում էին, որ կնոջը շատ իրավունքներ տալը կարող էր խաթարել հայ ընտանիքը: Իսկ իրավական անհավասարությունն արդարացվում էր բնական անհավասարությամբ: Կինը չպետք է մոռանար «իր՝ բնությունից ստացած դրությունը և ներքին պաշտոնը և ցանկանար հասարակական կյանքի բոլոր երևույթների մեջ իրեն տղամարդուն հավասարեցնել»[2]:

Մ. Նալբանդյանը և նրա գաղափարակիցները փորձում էին ապացուցել, որ կնոջ իրավունքը չպետք է սահմանափակվեր միայն կրթություն ստանալով, քանի որ եկել է նոր դարաշրջան, որտեղ մարդկությունը կնոջը ստրուկ չի համարում:

19-րդ դարում Կ. Պոլսում ասպարեզ եկավ «Ընտանի իմաստասեր» պարբերականը, որի հիմնական նպատակն էր կնոջ, դեռահաս աղջիկների մեջ ներշնչել լիարժեքության, ազգային արժանապատվության, հասարակական գործերում իրենց կարևորության զգացումը[3]:

Կանանց հիմնավոր, ազգային ար-

1 Զաքարյան Լ., Հարությունյան Ա., նշվ. աշխ. էջ 52:

2 Հարությունյան Ա., «Երևելի տիկնանց դարը, հայ կանանց հասարակական գործունեությունը 19-րդ դարում և 20-րդ դարասկզբին», Երևան 2005, էջ 160:

3 Հակոբյան Մ., «Զմյուռնահայ պարբերական մամուլը», Երևան 1987, էջ 362:

ժեքների վրա հիմնված խնդրով էր հետաքրքրված նաև Ստեփան Ոսկանը: Նա իր «Արևմուտք» հանդեսում բարձրաձայնում էր, որ առանց հիմնավոր կրթության անհնար է ընդունել Եվրոպայից եկող ազդեցությունները: Նա հայ կանանց հորդորում է «ոսկին կապարին հետ չփոխել, չտարվել Եվրոպայի արտաքին փայլով, այլ հասու լինել Եվրոպայի «ազնիվ տիկինների» սրտին ու մտքին և օրինակ ունենալ «նախ՝ Եղիշեի նկարագրած արի տիկինները և հետո օտարազգի պեպեկները...[1]»:

Կանանց և տղամարդկանց իրավահավասարության գաղափարները ճշգրիտ շեշտադրումներով ու զորեղ ապացույցներով «Մուրճ» ամսագրում բարձրաձայնել է խմբագիր Ավետիս Արասխանյանը: «Կինը հասարակության մեջ» հոդվածում նա կանանց հարցը տեղափոխում է մարդու իրավունքների հարթություն: Ուշադրություն է հրավիրում կանանց զարգացման խնդրի վրա, որը կենսական պայման է համարում մեր ազգի և ընդհանրապես, մարդկության զարգացման համար. «Պետական և ազգային զարգացման գաղափարն ամենից վառ է, ամենից արթուն և ընդհանրության մեջ խորը արմատներ գցած[2]»,-շեշտադրում է Ա. Արասխանյանը: Ըստ նրա՝ սա իրավունքի խնդիր է և չպետք է շփոթել այն կանանց և տղամարդկանց հավասար կամ անհավասար մտավոր ունակությունների հետ:

19-րդ դարում կանանց հարցի արծարծման տեսանկյունից նշանակալի դեր են ունեցել Գրիգոր Արծրունին և նրա «Մշակ» թերթը: Արծրունին առաջին անգամ այս հարցը բարձրացրեց, երբ դեռ ուսանող ժամանակ Սանկտ Պետերբուրգում թղթակցում էր «Մեղու» լրագրին: Արծրունին քննադատում էր ժամանակի դաստիարակության համակարգը՝ դպրոց, ընտանիք: Իր հոդվածներից մեկում նա գրում էր ընտանիքում կնոջ իրավազուրկ լինելու մասին և բարձրացնում էր կնոջ կրթության իրավունքի ապահովման հարցը: Արծրունին ժամանակ առ ժամանակ հանրագումարի էր բերում հայ կնոջ առաջխաղացման արդյունքները: «Իգական պրոլետարիատ» հոդվածաշարում նա խիստ անբավարար էր համարում Անդրկովկասում 15 տարի գործող իգական դպրոցների հասարակական օգուտը: Արհեստագործական կրթության բացակայությունը հանրակրթական դպրոցում, նրա կարծիքով, հանգեցնում էր չարաղետ հետևանքի[3]:

Կնոջ կրթության խնդիրը, կինը և քաղաքականությունը, կնոջ ազատագրումը, կանաց իրավունքները, կնոջ հասարակական գործունեության ոլորտները, կնոջ ազդեցությունը լուսավորության վրա, կանանց աշխատանքի հարցը մշտապես քննարկվել ու բարձրացվել են «Մշակում»: «Ձեզ ենք դիմում, հայ կանա՛յք, և կրկնում ենք, որ մենք ձեզանից ենք սպասում հայության բարոյական և մտավոր վերանորոգության գործի առաջ տանելը...Առանց ձեզ մենք ոչինչ ենք: Ձեզանից ենք սպասում մեր վերանորոգությունը:...Այն րոպեից սկսած, երբ հայ կինը կմեկնի մեզ օգնության ձեռքը, կրկին կվերադառնա հայությանը, մենք կկարողանանք մեզ փրկված ասել և ժողովրդի մտավոր և բարոյական վերանորոգության գործը հաջողված համարել[4]»: Գր. Արծրունին արձանագրում էր նաև հայ կանանց հաջողություններ, նրանց առաջխաղացումները: «Մեր կանանց առաջին քայլերը» հոդվածում նա գրում էր, թե ինչ հայրենասիրական քայլեր արեցին կանայք՝ հօգուտ գաղթականների[5]:

Ռաֆֆին նույնպես անդրադարձել է կանաց խնդրին: Նրա «Հայ կինը» ուսումնասիրությունը շարունակաբար

1 Հարությունյան Ա., նշվ. աշխ., էջ 175:
2 Նույն տեղում, էջ 170:
3 «Մշակ», 1886, № 120, 122, 124:
4 Գևորգյան Լ., «Գ. Արծրունին և նրա «Մշակը»», Երևան 1996, էջ 412:
5 Հայ պարբերական մամուլի պատմություն,18-19-րդ դդ., էջ 56:

լույս է տեսել «Մշակում»:

Ռաֆֆին, հետազոտելով գյուղի, գավառների, Թիֆլիսի կանանց կյանքը, բնութագրել է նրանց բոլոր տիպերը: Նա գտնում էր, որ կինը պետք է դուրս գար բանտարկյալ վիճակից, սակայն նախ՝ անհրաժեշտ էր նախապատրաստել կնոջը՝ հասարակական ասպարեզ դուրս գալու համար, ինչն անհրաժեշտ էր նաև տղամարդկանց. «Մեր զարգացած կանայք կարող են ունենալ միայն գրականական սալոններ, բայց մեր գրականությամբ պարապող երիտասարդությունը դեռևս այն աստիճան անկիրթ է, որ հազիվ թե իր պատիվը հասկացող մի տիկին կցանկանար նրանց առջև բաց անել իր դռները»[1]:

Մերժելով ընտանիքի «միապետական կազմը», որտեղ բռնակալի գահին նստած է տղամարդը, իսկ կնոջ ամեն մի ընդվզում իր ստրկական վիճակի դեմ անողոքաբար պատժվում էր, Ռաֆֆին տղամարդու և կնոջ «կրոնա-ամուսնական» հնացած կապն այլևս պատմությամբ մերժված է տեսնում. նրան փոխարինելու է գալու «ընտանեկան» կապը, որը կնոջը դուրս կբերի կրավորական վիճակից և կդարձնի հասարակության լիիրավ անդամ[2]:

«Հայ կինը Ղարաբաղում» ընդարձակ ուսումնասիրությամբ «Մշակում» հանդես է գալիս Լեոն՝ գտնելով, որ հայ կինն արժանի է մամուլի էջերում ավելի մեծ ուշադրության: Նահապետական առաքինությունների անհետացման նշանները մի ավելի լավ հասարակական հարաբերություն չեն գուշակում, գյուղում դեռևս չորս պատի մեջ և սպիտակ չադրայից իր ազատության սահմանը՝ երևացող աչքերով ցուցադրող կինը, իսկ քաղաքում եվրոպական արտաքինով կինը՝ «փայլուն սիրունիկ զարդը, ոչնչով լավ և ոչնչով պակաս մի շքեղ սիրամարգից»: Մի դեպքում՝ անզարդ հետամնացություն, մյուս դեպքում՝ պճնված քաղքենիություն:

«Մշակի» շնորհիվ ասպարեզ եկան կին թղթակիցներ, որոնք հաջողությամբ շարունակեցին սկսված բանավեճը: Խելացի ու համարձակ մտքերով աչքի է ընկնում «Կանանց խնդիրը հոդվածը», որի տակ ստորագրված էր՝ օրիորդ Ե. Թ.: «Ստրկություն բառը կամաց-կամաց սկսում է խորթանալ»,-գրում էր թղթակցուհին,- «հավասարությունն ավելի ու ավելի բարձրանում է. անհատական ինքնուրույնության գաղափարը մտնում է մարդու մտքերի մեջ, մի խոսքով, գիտակցությունը ավելանում է, իսկ գիտակցությունը սկիզբն է և ավանդն ազատության»[3]:

Արևելահայ իրականության մեջ կանայք արձագանքողի դերում էին, և երկյուղածություն կար նրանց ելույթների մեջ: Արևմտահայ իրականության մեջ, ընդհակառակը, Սրբուհի Տյուսաբն ինքն էր բանավեճ հրահրում, կրքեր բորբոքում:

Կնոջ բերանով կնոջ ազատության հարցեր բարձրացնելը թուրքական իրականության պայմաններում մեծ համարձակություն էր: Մ. Մամուրյանի խոսքերով՝ նա «դառն ճշմարտություն ասելու բարոյական արիություն ունեցավ՝ մատը դնելով ազգային ծանր վերքի վրա»[4]: Ողջունելով Ս. Տյուսաբի գաղափարները՝ Մամուրյանը արտատպեց նրա՝ «Քանի մը խոսք կանանց անգործության մասին» հոդվածը: Տյուսաբը, Մամուրյանի խնդրանքով, գրեց նաև «Կանանց աշխատության սկզբունքը» հոդվածը, որտեղ կանանց բաժանեց երեք դասի՝ ա) աղքատ դաս, կին, որ աշխատում է գրկանքների, տվայտանքների մեջ, աշխատում է բնազդով, սոսկ գոյությունը պահպանելու համար, բ) միջին դաս. գոռոզ ու աշխատանքի թշնամի, «մեծափարթամ» կանայք, գ) կանայք, որոնք հարստության ու զեխության մեջ արհամարհում էին աշխատանքը: Ըստ Տյու-

1 Գևորգյան Լ., նշվ. աշխ., էջ 413:
2 Նույն տեղում:
3 «Մշակ», 1887, № 46:
4 Գևորգյան Լ., նշվ. աշխ., էջ 427:

սաբի՝ աշխատանքը պետք է ընկալվեր որպես սկզբունք, հասարակության մեջ արժանի տեղ գրավելու միջոց[1]:

Ս. Տյուսաբը քննադատում էր Նապոլեոնի օրենսգրքերը, որտեղ կանանց իրավունքների մասին խոսք անգամ չկար, ծաղրի էր ենթարկում 18-րդ դարի ֆրանսիական «իմաստուններին, որոնք չհասկացան կնոջ կատարած դերակատարությունը հասարակության առաջընթացի գործում»[2]:

Կնոջ դատի պաշտպանությունը դարձավ Ս. Տյուսաբի գրական ստեղծագործության առանցքը: Նրա այդ գաղափարները հետագայում մարմնավորեցին նրա «Մայտա», «Սիրանույշ» «Արաքսիա կամ Վարժուհին» վեպերում, որոնցով, իբրև առաջին վիպասանուհի, առանձնահատուկ տեղ գրավեց հայ գրականության պատմության մեջ:

19-րդ դարի երկրորդ կեսի և 20-րդ դարասկզբի հայ պարբերական մամուլի միջոցով հասարակական գիտակցության մեջ աստիճանաբար արմատավորվեց սեռերի իրավահավասարության խնդիրը:

Առաջին հայ պարբերականը, որ պաշտոնապես հասցեագրվել է իգական սեռի ընթերցողներին «Հավերժահարսն» է, թեև իր բնույթով ու բովանդակությամբ այն կարելի է դասել կանանց պարբերականների շարքը[3]:

Խորհրդահայ մամուլն ու կանանց խնդիրը: Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո պարբերական մամուլը կանանց հարցի առնչությամբ դրսևորում էր «պետական ֆեմինիզմի» քաղաքականություն, իսկ կանայք դրանց կողմից սկսեցին դիտվել իբրև քաղաքացիների հատուկ կատեգորիա: «Կենցաղի հեղափոխությունը» (սնունդ՝ հասարակական ճաշարաններում, լվացք՝ լվացքատանը և այլն), պետք է ազատեր կնոջը տնային հոգսերից և ներգրավեր նրան հասարակական կյանք: Մեծ փոփոխություններ տեղի ունեցան ամուսնա-ընտանեկան ոլորտում. հաստատվեց քաղաքացիական ամուսնությունը, թույլատրվեց ապահարզանը, օրինականացվեցին արտաամուսնական երեխաները: Աբորտը նույնպես օրինականացվեց, թեև այդ հարցը լուծվում էր ոչ թե ընտանիքի անդամների, այլ կինբաժնի, կոլեկտիվի և սոցապահովության բաժնի ներկայացուցիչների համաձայնությամբ ու թույլտվությամբ:

Խորհրդահայ պարբերական մամուլը սկսեց կերտել աշխատավոր կնոջ կերպարը՝ կոմունիստական կուսակցության կողմից նախանշված նպատակներին հասնելու համար:

Խորհրդային Հայաստանի բոլոր շրջաններում անցկացվեցին անկուսակցական կանանց համագումարներ, որոնք լուսաբանվում էին մամուլի կողմից: «Խորհրդային Հայաստան» թերթը գրում էր. « Հայ կինը չի տեսել, որ իրեն մարդու տեղ դնեն, լսեն իր մտածմունքները և կանչեն իրեն մասնակցելու ընդհանուր աշխատավորության կյանքին»[4]:

Կանանց կոչ էր արվում մտնել հասարակական ոլորտ, հայտարարվում էր, որ ժամանակը չէ, որ կինը զբաղվի իր ընտանիքով և երեխաներով:

Մամուլում կանանց թեման առավել ակտիվ է շոշափվել Մարտի 8-ի կապակցությամբ: Ներկայացվում էր՝ օրինակ, տոնի առիթով կազմակերպվող օրինակելի միջոցառումների ծրագիրը: Թերթերում լուսաբանվում և խրախուսվում էին կանանց կատարած աշխատանքները, պարսավանքի էին ենթարկվում նրանք, ովքեր խոչընդոտում էին նրանց ակտիվ գործունեությանը: Խորհրդային առաջին տարիներին կանանց հասարակական ոլորտ ընդգրկելու խնդիր էր առաջացել, և մամուլի խնդիրն էր զբաղ-

1 Թամրազյան Հ., «Երկեր» հ. Ա., Երևան 2006, էջ 786:

2 Գևորգյան Լ., նշվ. աշխ., 1996, էջ 418:

3 Զաքարյան Լ. , Հարությունյան Ա., նշվ. աշխ., էջ 68:

4 Զաքարյան Լ., Հարությունյան Ա., նշվ. աշխ., էջ 130:

վել դրա քարոզչությամբ: Հետագայում փոխվում է քաղաքականությունը, փոխվում է նաև մամուլի դիրքորոշումը: Հիշատակման է արժանի այն, որ կանայք ներգրավվեցին հասարակական ոլորտ, ինչը հանգեցրեց ծնելիության չափերի նվազմանը: 1936թ. հունիսի 27-ի ՍՍՀՄ Կենտրոնական գործադիր կոմիտեի և Ժողովրդական կոմիսարների խորհրդի որոշման համաձայն՝ աբորտն արգելվեց: Մամուլն սկսեց ձևավորել բազմազավակ մոր կերպարը, ստալինյան Սահմանադրությամբ ամրապնդվեց սեռերի իրավահավասարությունը կյանքի բոլոր բնագավառներում:

Հետպատերազմյան տարիներին տնտեսության վերականգման խնդիր կար, և ՋԼՄ-ներում կարևորվեց կանանց մասնակցությունը հասարակական կյանքին: Ստեղծվեց արտոնյալ օրենսդրություն: Այս շրջանում հայաստանյան մամուլը հեղեղված էր հայ կնոջ ձեռքբերումների մասին պատմող նյութերով[1]:

Շուշանիկ Կուրղինյանը[2] այն հայ բանաստեղծուհիներից էր, ովքեր դեմ էին կանանց իրավունքների սահմանափակմանն ու բռնությանը: Նա հայկական ֆեմինիզմի ծիլն էր, սկիզբն էր, այն բանաստեղծական ձեռքը, ով բացեց հայուհիների աչքերը, նրանց ոգևորեց, որ խոսեն: Նրա ստեղծագործությունները շատ դիպուկ են, և դրանցում բարձրացված թեման արդիական է բոլոր ժամանակների համար: Շ. Կուրղինյանի ստեղծագործություններից շատերը («Գեղեցկուհու մորմոքը», «Արծվի սերը», «Որպես քնքուշ մայիսյան վարդ և այլն»), նվիրված են հայ կնոջ դատի պաշտպանությանը: «Ես ձեզ խղճում եմ» բանաստեղծության մեջ Շ. Կուրղինյանը ներկայացրել է կանանց, ովքեր մտածում էին միայն տղամարդկանց գերելու մասին, ովքեր պատրաստ էին փողով վաճառվելու և չէին պաշտպանում իրենց իրավունքներն ու ազատությունը.

«Ես ձեզ խղճում եմ
Խղճում եմ ձեզ, բթամիտ կանայք,
Որ արդ ու զարդի հետևից ընկած,
Թրև եք գալիս միշտ աննպատակ,
Լպիրշ վաճառքի դեմքերդ կոկած:
Որ ամեն հնար դուք գործ եք ածում
Միշտ արուների հաճույքը շոյել» [3]:

Կանանց խնդրի լուսաբանումը ժամանակակից հայ մամուլում: Խոսքի և տեղեկատվության ազատությունը համարվում է հասարակության և յուրաքանչյուր անհատի զարգացման հիմնական նախապայման: Այս ազատությունները կարևոր տեղ ունեն մարդու իրավունքների համակարգում, քանի որ տեղեկացված չլինելու պարագայում անհատը չի կարողանա իրականացնել իր մնացած իրավունքները: Այս կամ այն հասարակության ժողովրդավարության մակարդակի մասին կարելի է դատել ըստ այն չափանիշի, թե որքանով են այդ հասարակության մեջ օրենսդրորեն ապահովված ու կարգավորված խոսքի, տեղեկատվության և լրատվամիջոցների ազատությունները:

Խոսքի և ազատության իրավունքն ամրագրված է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 19-րդ հոդվածում, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 19-րդ հոդվածում, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածում[4] :

Ժողովրդավարության մասին տեսությունն ու գործելակերպն անընդհատ զարգացման մեջ են: Արդի ժամանակաշրջանում ժողովրդավարությունը բազմաթիվ հիմնախնդիրներ է առաջադրում հասարակությանը, որոնցից մեկը կանանց և տղամարդկանց հավասարությունն է: Սակայն հռչակել իրավահավասարություն, դեռ չի նշանակում

1 Հայ պարբերական մամուլի պատմություն,18-19-րդ դդ., 79:
2 http://hy.wikipedia.org/:
3 http://www.xnet.am/read/16183/0/:
4 Զաքարյան Լ., Հարությունյան Ա., նշվ. աշխ., էջ 96:

ապահովել դրա փաստացի իրականացումը: Չպետք է մոռանալ, որ չի կարող գոյություն ունենալ անսահմանափակ ազատություն՝ առանց պատասխանատվության: Ըստ այդմ՝ լրագրությունը գտնվում է ազատության ու պատասխանատվության սահմանագծում:

Հայաստանի Հանրապետությունում կան լրատվամիջոցներ, որոնք արագ և լիարժեք, շատ հաճախ նաև՝ ոչ ճիշտ տեղեկատվություն են մատուցում հասարակությանը՝ կյանքի տարբեր բնագավառների վերաբերյալ:

Կովկասյան հետազոտական ռեսուրս կենտրոնի հայաստանյան գրասենյակի (CRRC – Armenia) կատարած՝ «Հայաստանի ԶԼՄ-ի մասին 2011 թ. հասարակական կարծիքի ու նախընտրությունների հետազոտության» համաձայն՝ հայաստանցիների 81%-ն ամեն օր հեռուստացույցի առջև միջինը երեք ժամ է անցկացնում: 33%-ի համար հեռուստատեսությունը ժամանցի հիմնական միջոցն է, որն օրական 7-12 ժամ է խլում: Հայկական սերիալներ դիտում է Հայաստանի բնակչության 80%-ը: Հեռուստաընկերությունները չեն հապաղում հեռուստադիտողին «ուրախացնել» նորանոր օճառային օպերաներով: Ամեն հերթական սերիալ նախորդից ավելի շատ դաժան տեսարաններ, հայհոյախառը բառապաշար ու բռնություն է պարունակում: Գրեթե բոլոր սերիալների հեղինակները կարծես խոսքերը մեկ արած լինեն, օճառային օպերաների համարյա ամեն սերիայում տղամարդ կերպարը հայհոյում, հոգեբանորեն ճնշում և ծեծում է իր կնոջը (անգամ հղի կնոջը), քրոջը, մորն ու զոքանչին: Հերոսուհիներն էլ հիմնականում չեն աշխատում, նրանց կերպարները կարծես ստեղծված են միայն ինտրիգներ հյուսելու, անվերջ լացելու և բռնության ենթարկվելու համար:

«Հասարակություն առանց բռնության» ՀԿ-ի վերլուծության համաձայն՝ հայկական սերիալներում կանանց նկատմամբ բռնության, լացի ու ընկճվածության տեսարանները կազմում են 60%: Նույն պատկերը արտացոլվում է նաև իրականության մեջ: Հայաստանի կանանց 52%-ը գոնե մեկ անգամ բռնության որևէ տեսակի է ենթարկվել: Ըստ հիշյալ ՀԿ-ի անցկացրած «Ձերծ պահիր ինձ քո կարծրատիպերից» սոցիոլոգիական հարցման տվյալների՝ հայ տղամարդկանց 55%-ը կարծում է, որ կինն է մեղավոր, եթե տղամարդը նրա վրա ձեռք է բարձրացնում:

Կանանց նկատմամբ մեդիայով «խրախուսվող» բռնությունը միակ խնդիրը չէ: Լրատվամիջոցներն ամեն օր մարդկանց ներշնչում են, որ կնոջ արժեքն ուղիղ համեմատական է նրա տեսքի ու սեքսուալության հետ: Երգիչներին շրջապատում են կիսամերկ աղջիկներ, երգչուհիներն էլ իրենց երգը հանրահայտ դարձնելու համար էրոտիկ տարրեր պարունակող հոլովակներ են նկարահանում:

Կնոջ մարմինը նաև օգտագործվում է ապրանք գովազդելու և գնորդին գրավելու համար: Հայկական ամսագրային գովազդներում կանանց 50%-ը կարճ, բաց հագուստով է, ներքնազգեստով կամ էլ բոլորովին մերկ է:[1]

Այն, ինչ ցուցադրվում է, ամրապնդվում է իրականության մեջ: Հայ տղամարդկանց 60%-ը համարում է, որ կինը երբեք լավ ղեկավար չի լինի[2]:

Հասարակության մեջ և տնտեսական կյանքում կանանց և տղամարդկանց իրավունքների ու հնարավորությունների ոլորտում առկա անհավասարությունը հիմնականում պայմանավորված է ոչ միայն մշակութային ավանդույթներով ու սոցիալ-տնտեսական իրավիճակով, այլև իրականացվող քաղաքականության մեջ գենդերային բաղադրիչի, գենդերային գաղափարախոսության՝ հետևաբար նաև ողջ հասարակության

1 «Կնոջ կերպարը հայկական գովազդում» հետազոտություն, (տես http://womennet.am):

2 http://womennet.am :

մեջ գենդերային մտածելակերպի բացակայությամբ:

Գովազդում կիրառվում են կանանց հասարակական կարծրատիպերով թելադրվող հետևյալ կերպարները.

1. Ընտանեկան օջախի պահապան (մայր, կին), այս կերպարը հիմնականում օգտագործվում է կենցաղային իրերի, սննդամթերքի, մանկական ապրանքների, դեղամիջոցների գովազդում:
2. Քաղաքային կոկետուհի. նա հեշտությամբ հաղթահարում է ցանկացած իրավիճակում ծագող բոլոր խնդիրները և վարում է ակտիվ կյանք: Այս կերպարը կիրառվում է կոսմետիկ միջոցների, օծանելիքի, հագուստի, կոշիկի, աքսեսուարների և, անգամ, հյութերի ու սպորտային ապրանքների գովազդում:
3. Գործարար կին. Նա անկախ է և միշտ բարձունքին: Այս կերպարն ակտիվ օգտագործվում է տեխնիկայի, մեքենաների, հագուստի գովազդում:

Տղամարդու կերպարը գովազդում լինում է հետևյալ տիպերի.

1. Գործարար տղամարդ. գովազդվող ապրանքը նրան օգնում է հասնել իշխանության, հզորության: Տվյալ կերպարն օգտագործվում է էլիտար ապրանքների գովազդում:
2. Խիզախ հերոս՝ «մաչո». համապատասխանում է տղամարդկանց՝ առաջնորդ լինելու կերպարին, կիրառվում է օծանելիքի, մարմնի խնամքի կոսմետիկ միջոցների գովազդում:
3. Ընտանիքի տեր. հոգ է տանում իր ընտանիքի մասին, մասնավորապես՝ տնտեսական, ընտանեկան հարցերում: Այս կերպարն ի հայտ է գալիս մեքենաների կամ բջջային օպերատորների սակագնային պլանների գովազդում:

Գովազդում գենդերային խտրականությունը ստեղծվում է տղամարդկանց՝ որպես գերիշխող և կանանց՝ որպես հնազանդվող սեռերի ներկայացման միջոցով: Գենդերի կիրառումը հայկական գովազդում չի սահմանափակվում տղամարդկանց և կանանց հարաբերությունների և հասարակության մեջ զբաղեցրած դիրքի մասին կարծրատիպային պատկերացումներով: Եթե արտասահմանյան գովազդում տղամարդու և կնոջ տիպիկ կերպարները սպառողներին հարազատ են, ապա հայերի համար այդ կերպարներն օտար են:

Հայաստանում յուրաքայչյուր 5-րդ կինը բարձրագույն կրթություն ունի, բայց այդ ներուժը մեր իրականության մեջ չի օգտագործվում ըստ արժանվույն: Պատճառները շատ են՝ սկսած հայ հասարակության հոգեկերտվածքից, վերջացրած նրանով, որ հայ կանայք մեծ մասամբ զբաղված են ընտանիքով ու ընտանեկան հարցերով:

Հայաստանում կանանց դերը հասարակության մեջ զգալիորեն բարձրացել է: Մեր երկրում կան բազմաթիվ չլուծված հարցեր՝ կապված կանանց խնդրի հետ, սակայն դրանք ժամանակ են պահանջում, և, աստիճանաբար «սայլը տեղից շարժվում է: Լրատվամիջոցները կամ սուտ տեղեկատվություն են իրականացնում այս խնդրի հետ կապված, կամ էլ հարցին անդրադառնում և այն լուսաբանում են սխալ տեսանկյունից: Հայաստանում գենդերային խտրականությանը հիմնականում անդրադառնում են ինտերնետային լրատվամիջոցները, որոնք լուսաբանում են կամ այդ ուղղությամբ ՀԿ-ների կատարած աշխատանքը, կամ՝ որոշ միջոցառումներ: Լրատվամիջոցների գլխավոր խնդիրը հարցը բարձրացնելն է հասարակության շրջանում, դրա համար լուծման տարբերակներ առաջարկելն է, հասարակությանն իրազեկված պահելն է մեր երկրում կատարվող բռնությունների, անհավասարությունների ու անարդարությունների

վերաբերյալ:

Ընտանեկան բռնությունը բռնության ամենատարածված տեսակներից մեկն է: Ընտանեկան բռնություն ասելով՝ նկատի ունենք որոշակի գործողություններ, որոնք կատարվում են ներընտանեկան հարաբերություններում և բնորոշվում են հոգեբանական ճնշման գործադրմամբ, ինչպես նաև կարող են ուղեկցվել ծեծով, սպառնալիքներով, սեռական բռնության կիրառմամբ. այսինքն՝ բռնությունը ընտանեկան զույգի միջև փոխհարաբերության այն տեսակն է, որը ընտանիքի զույգի անդամներից որևէ մեկին պատճառում է ֆիզիկական, հոգեբանական կամ սեռային վնաս: Սովորաբար տղամարդիկ են դիմում բռնության՝ փորձելով ճնշում գործադրել կամ ցույց տալ իրենց իշխանությունը թույլ սեռի հանդեպ:

Այսպիսով՝ մեր ուսումնասիրության շրջանակներում կատարված աշխատանքի արդյունքում կարելի է փաստել, որ հայաստանյան հեռուստատեսությունները քիչ են անդրադառնում մեր իրականության մեջ առկա գենդերային հիմնահարցերին: Լրատվամիջոցների զգայուն քաղաքականությունն ամրապնդում է կանանց կարծրատիպային ընկալումը հասարակության կողմից որպես անհատներ, ովքեր անընդունակ են իրականցնել հասարակական-քաղաքական ակտիվ գործունեություն:

Այսպիսով՝ տղամարդու և կնոջ հավասարության մասին խոսելիս հարկավոր է նկատի ունենալ ոչ թե ֆիզիկական հավասարությունը, այլ այն, որ սոցիալապես կինն ու տղամարդը պետք է լինեն հավասար: Դա նշանակում է, որ հասարակության և պետության մեջ նրանց համար պետք է ընձեռված լինեն հավասար հնարավորություններ: Քանզի ժողովրդավարությունը հնարավոր չէ պատկերացնել առանց սեռերի հավասարության: Առաջադեմ ու զարգացած հասարակությունը վաղուց է հանգել այն համոզման, որ սեռերի հավասարության նպատակի իրականացման համար ամենադժվար խոչընդոտը մարդկանց մտածելակերպում արմատացած կաղապարներն են՝ գենդերային կարծրատիպերը: Մարդը ծնված օրվանից իր ամբողջ կյանքի ընթացքում կրում է տվյալ հասարակության ազդեցությունը՝ «կերտվում» որպես կին կամ տղամարդ: Գենդերային նորմերը սերմանվում են մանկուց, իսկ հետագայում ամրապնդվում զանազան սոցիալական ինստիտուտների միջոցով: Լրատվամիջոցներն ամեն օր մարդկանց ներշնչում են, որ կնոջ արժեքն ուղիղ համեմատական է նրա տեսքի ու սեքսուալության հետ: Երգիչներին շրջապատում են կիսամերկ աղջիկներ, երգչուհիներն էլ իրենց երգը հանրահայտ դարձնելու համար էրոտիկ տարրեր պարունակող հոլովակներ են նկարահանում: Մամուլը պետք է կարծիք հայտնելու հնարավորություն ընձեռի այս հարցին դեմ և կողմ վերաբերվող մարդկանց: Հայաստանում այսօր գոյություն չունի կնոջ նույնականացման խնդիր, ընդհակառակը, այսօր գոյություն ունի ազգային նույնականացման, ինքնության խնդիր: Հայ կանանց մեծ մասը չունի իր տեղը կյանքում: Հայաստանում յուրաքանչյուր 5-րդ կինը բարձրագույն կրթություն ունի, բայց այդ ներուժը մեր իրականության մեջ չի օգտագործվում ըստ արժանվույն: Պատճառները շատ են՝ սկսած հայ հասարակության հոգեկերտվածքից, վերջացրած նրանով, որ հայ կանայք մեծ մասամբ զբաղված են ընտանիքով ու ընտանեկան հարցերով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Զաքարյան Լ., Հարությունյան Ա. «Գենդեր և լրագրություն», Երևան, 2010թ.
2. Թամրազյան Հ., «Երկեր», Երևան, 2006թ.
3. Հակոբյան Մ., «Զմյուռնահայ պարբերական մամուլը», Երևան, 1987թ.
4. «Հայ պարբերական մամուլի պատմությունը 18-19-րդ դդ.», Կահիրե, 2006թ.
5. Հարությունյան Ա. «Երևելի տիկնանց դարը, հայ կանանց հասարակական գործունեությունը 19-րդ դարում և 20-րդ դարասկզբին», Երևան, 2005թ.

ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐ

«Մշակ», 1886թ., N120, 122, 124
«Մշակ», 1887թ., N46

ԿԱՅՔԵՐ

www.wikipedia.org
www.xnet.am
www.womannet.am

ПРОБЛЕМА ГЕНДЕРНОГО НЕРАВЕНСТВА В АРМЯНСКОЙ ДЕЙСТВИТЕЛЬНОСТИ И ЕЕ ОСВЕЩЕНИЕ В АРМЯНСКИХ СРЕДСТВАХ МАССОВОЙ ИНФОРМАЦИИ

ЛУИЗА ГУМРОЯН

Руководитель центра "Русский язык и культура"

В статье рассматривается актуальная проблема современной армянской действительности – гендерное неравенство. Был проведен опрос группы армянских образованных людей мужского пола. Они считают, что гендерное неравенство тормозит процесс развития демократического общества и выступают за женское образование, высоко оценивая особую роль женщин в обществе. По их мнению, соблюдение гендерного равенства исходит из интересов общества. Таким образом, автор выступает за освещение этой проблемы в армянских СМИ.

GENDER INEQUALITY PROBLEM IN THE ARMENIAN REALITY AND ITS COVERAGE IN MASS MEDIA

LUIZA GUMROYAN

Leader of the Centers of The Russian Language and Culture

The article touches upon one of the crucial problems of the Armenian reality: gender inequality. It was a group of male Armenian intelligent people who first put forward such a question. They believed that gender inequality prevents the democratic development of the society. They were for the female education and women's special place in the society, as it derived from the interests of the country itself. Hence, the author revels the coverage of all those problems in the Armenian mass media.